ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2015 թվականի N 126 -Ա

<<ՍՅՈՒՆԻՔ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի մասին>> օրենքի՝ <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. <<Սյունիք>> մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով 800.0 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել <<Սյունիք >> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, կանոնադրությունը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1- 5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2015թ. հոկտեմբերի 6
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. հոկտեմբերի 6-ի
N 126-Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

<<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի

1. Ս.Խաչատրյան	ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ տեղակալ
3. Հ.Ալեքսանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Հ.Հովհաննիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Հայրապետյան	Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Վ.Ադունց	Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Ա. Հովհաննիսյան	Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Մ. Զաքարյան	Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Վ. Գևորգյան	Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Ա. Հակոբջանյան	Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
12. Վ. Արզումանյան	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. հոկտեմբերի 6-ի
N 126-Ա որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

«Սյունիք» մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

- Փառատոնը նվիրվում է մեծանուն հայ գրող ու հրապարակախոս Սերո Խանզադյանի ծննդյան -100 ամյակին
- Փառատոնի նպատակն է՝ նպաստել մարզի ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողների ու դպրոցականների շրջանում հայ արվեստի նկատմամբ սիրո դրսևորման, ազատ ժամանցի կազմակերպման, գեղագիտական դաստիարակության ձևավորմանը, շնորհալի և տաղանդաշատ երեխաների հիայտ բերմանը, հայրենիքի նկատմամբ սիրո, հավատարմության, հայրենասիրության գաղափարի սերմանմանը, միասնական հայրենիք կերտելու գաղափարի դրսևորմանը: Երիտասարդ սերնդի ուշադրությունը բևեռել հայ անաղարտ գրականությանն ու պոեզիային, վեր հանել ասմունքի հարուստ ավանդույթները, մեկ անգամ ևս անդրադառնալ հայ գրողների՝ Հ.Շիրազի, Պ.Սևակի, Հ.Սահյանի, Ս.Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Գ. Էմինի և այլոց թողած գրական հարուստ ժառանգությանը:
- Փառատոնը անց է կացվելու երկու փուլով, առաջին փուլը՝ ս/թ հոկտեմբերի 1-ից - 20-ը, նախնական ընտրություն մարզի համայնքներում, երկրորդ մարզային փուլը՝ ս/թ հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 30-ը Գորիս քաղաքում:
- Փառատոնի շրջանակներում կանցկացվեն բազմաբնույթ մշակութային և սպորտային միջոցառումներ, ավանդական ազգային խաղեր:
- Պսակադրություն Սերո Խանզադյանի հուշարձանին,արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների հուշարձաններին:
- Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կցուցադրվեն <<Հայֆիլմ>> կինոստուդիայի կողմից էկրանավորված <<Մխիթար Սպարապետ>>, <<Մոռացված հեքիաթների կիրճը>> ֆիլմերը:
- Այցելություն Ա.Բակունցի տուն թանգարան, Գորիսի երկրագիտական թանգարան, պատմամշակութային հուշարձաններ:
- Փառատոնի շրջանակներում կկազմակերպվի հանդիպում-համերգ Սյունիքի մարզի լավագույն երաժշտական խմբերի կատարմամբ:
- Փառատոնի մրցանակային տեղեր գրաված մասնակիցները կպարգևատրվեն ՀՀ Սյունիքի մարզպետի պատվոգրերով և հուշանվերներով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. հոկտեմբերի 6-ի
N 126- Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
<<Սյունիք >> մարզամշակութային փառատոնի

Փառատոնի նպատակը

Փառատոնը նվիրվում է մեծանուն հայ գրող ու հրապարակախոս Սերո Խանզադյանի ծննդյան -100 ամյակին

Փառատոնի նպատակն է՝ նպաստել մարզի ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների սովորողների ու դպրոցականների շրջանում հայ արվեստի նկատմամբ սիրո դրսևորման, ազատ ժամանցի կազմակերպման, գեղագիտական դաստիարակության ձևավորմանը, շնորհալի և տաղանդաշատ երեխաների հիայտ բերմանը, հայրենիքի նկատմամբ սիրո, հավատարմության, հայրենասիրության գաղափարի սերմանմանը, միասնական հայրենիք կերտելու գաղափարի դրսևորմանը: Երիտասարդ սերնդի ուշադրությունը բևեռել հայ անաղարտ գրականությանն ու պոեզիային, վեր հանել ասմունքի հարուստ ավանդույթները, մեկ անգամ ևս անդրադառնալ հայ գրողների՝ Հ.Շիրազի, Պ.Սևակի, Հ.Սահյանի, Ս.Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Գ. Էմինի և այլոց թողած գրական հարուստ ժառանգությանը:

Փառատոնի պատվիրատուն և կատարողը

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Փառատոնի մասնակիցները

<<Սյունիք>> մարզամշակութային փառատոնին մասնակցում են Սյունիքի մարզի շնորհալի երեխաներ, ստեղծագործողներ, ,երիտասարդներ,մարզի տարածաշրջաններից հրավիրված երաժշտական և պարային խմբեր, անհատ կատարողներ, դերասաններ, մակավարժական կոլեկտիվներ:

Փառատոնի անցկացման կարգը

- Մրցույթ-փառատոնը կանցկացվի երկու փուլով՝ առաջին փուլը նախնական ընտրություն մարզի համայնքներում, ս/թ հոկտեմբերի 1-ից - 20-ը, երկրորդ մարզային փուլը՝ ս/թ հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 30-ը Գորիս քաղաքում:

Մասնակիցները կբաժանվեն երկու տարիքային խմբի՝ 11-14 և 15-17 տարեկան՝ առանց բացառությունների: Ամեն մասնակից ելույթի համար ընտրում է պարտադիր երկու ստեղծագործություն Վահագն Դավթյանի և Գևորգ Էմինի ստեղծագործություններց, իրենց ցանկությամբ, որոնց տևողությունը չպետք է գերազանցի երկու (2) րոպեն:

Փառատոնի ժամկետը և վայրը

Միջոցառումները անց են կացվելու 2015թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարզի հանրակրթական դպրոցներում: Փառատոնի եզրափակիչ փուլը՝ Գորիս քաղաքում:

Փառատոնի ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:

Փառատոնի անցկացման հետ կապված ծախսերը հոգում է <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված N 4
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. հոկտեմբերի 6 -ի
N 126-Ա որոշմամբ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

<<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4240.00	135.0
2	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	155.0
3	Սարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	40.0
4	Հանրային սննդի ծառայության ծախսեր	4236.21	185.0
5	Նվերներ	4237.12	175.0
6	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում/	4239.11	70.0
7	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	4261.11	40.0
	Ընդամենը		800.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 5
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ. հոկտեմբերի 6-ի
N 126- Ա որոշմամբ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Սյունիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

հ/հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	Փառատոնի 1-ին փուլ	Հոկտեմբերի 1- 20 2015թ.	Մարզի քաղաքային և գյուղական համայնքներ
2	Փառատոնի 2-րդ փուլ	Հոկտեմբերի 25- 30 2015թ.	ՀՀ Սյունիքի մարզ Գորիսի N 4 ավագ դպրոց
4	Փառատոնի մասնակիցների դիմավորում	ժամը 11^{00}-ին	Գորիս, Գ.Տաթևացու հրապարակ
5	Պսակադրություն Սերո Խանզադյանի հուշարձանին, արցախյան պատերազմում զոհվածների շիրիմներին	ժամը 11^{00}-12^{00}	ք. Գորիս 6 հիմնական դպրոց
6	Փառատոնի բացումը Ճաշ Մարզային փառատոնի եզրափակիչ ելույթներ, մրցանակաբաշխություն, փառատոնի փակման արարողություն	ժամը 12^{00}-15^{00} 15-00-16-00 16-00-18-00	Գորիսի N4 ավագ դպրոց Ք.Գորիս Գորիսի N4 ավագ դպրոց
7	Այցելություն Գորիսի պատմամշակութային վայրեր և թանգարաններ	18-00-19-00	Ա.Բակունցի տուն թանգարան, Գորիսի երկրագիտական թանգարան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան